

News Release

26 հոկտեմբերի, 2021թ.

«Էյչ-Էս-Բի-Սի» Խմբի և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի համատեղ ծրագիրը բարելավել է գործազուրկ բնակչության SS և ձեռնարկատիրական հմտությունները

Ս.թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ «Էյչ-Էս-Բի-Սի» Խմբի կողմից ֆինանսավորվող և «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող «Գործազուրկ բնակչության շրջանում SS և ձեռնարկատիրական հմտությունների բարելավում ՀՀ մարզերի տնտեսական զարգացումը խթանելու նպատակով» ծրագրի ամփոփիչ միջոցառումը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 149 հազար ԱՄՆ դոլար, որից 105,5 հազար ԱՄՆ դոլարը նվիրաբերել է «Էյչ-Էս-Բի-Սի» Խումբը:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում երկու փուլով:

Առաջին փուլի շրջանակում վերոնշյալ մարզերում պատրաստվել են 75 մարզաբնակ մասնագետներ՝ որոնցից 48-ն արդեն անցել են աշխատանքի առաջատար SS ընկերությունների մարզային մասնաճյուղերում: Ծրագրի ընթացքում մասնակիցները խորությամբ ուսումնասիրել են ինժեներական և ծրագրավորման համապարփակ ուղղություններ, ինչպես նաև ձեռք են բերել տեխնիկական և միջանձնային հարաբերությունների զարգացման համար այլ անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ: Վեցամյա դասընթացները մատուցել են ծրագրի հիմնական գործընկեր հանդիսացող ուսումնական կենտրոնի և մարզերում գործունեություն ծավալող շահագրգիռ SS ընկերությունների ավագ մասնագետները: Դասընթացներին անմիջապես հաջորդել է երկամյա աշխատանքային պրակտիկա SS առաջատար ընկերությունների մարզային մասնաճյուղերում:

Ծրագրի **երկրորդ փուլի** շրջանակում մարզաբնակ 45 երիտասարդներ ստացել են բիզնես սկսելու և այն զարգացնելու եզակի հնարավորություն: Ծրագրի շրջանակում կազմակերպվել են ձեռնարկատիրական հմտությունների զարգացման և բիզնեսի պլանավորման գործնական դասընթացներ, տրամադրվել են սուբսիդավորված վարկեր: Ծրագիրը նպաստել է նաև աշխատատեղերի և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացմանը մարզերում:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2,969 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 7 գրասենյակների և մոտ 310 աշխատակիցների միջոցով:

2021 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 311 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը, իր գործունեությունը սկսելով դեռ 1990-ականներից, օժանդակում է Հայաստանում սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը՝ ոգեշնչելով մարդկանց օգտագործել իրենց իսկ ներուժը: Հիմնադրամը գործունեություն է ծավալում Հայաստանում, Արցախում և Վրաստանում կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, քաղաքացիական հասարակության, տնտեսական և համայնքային զարգացման բնագավառներում: Հիմնադրամի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.jinashian.org:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ

Լիանա Սարգսյան

Հեռ.՝ (37410) 525809, 544417, 544418

Բջջ.՝ (37491) 549437

Էլ. փոստ՝ lianas@jinashian.am

Կայք՝ www.jinashian.org